ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 597-Ն ՈՐՈՇՄԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով հարցի համակողմանի քննարկման արդյունքում որոշում կայացնելու անհրաժեշտությունը և հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության՝ վեճի առարկա որոշումից զատ համադրված վերլուծության առարկա պետք է դառնան նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքների համապատասխան դրույթները, ինչպես նաև այս ոլորտում ՀՀ միջազգային պարտավորությունների պատշաճ կատարման հիմնահարցերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Հետաձգել գործի դատաքննությունը և այն վերսկսել 2013 թվականի նոյեմբերի 12-ին, ժամը 10.00-ին:
2. Վերանայել ՀՀ սահմանադրական դատարանի 11.06.2013թ. ՍԴԱՈ-57 աշխատակարգային որոշման 4-րդ կետը և գործի դատաքննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով:
3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգով սույն գործի դատաքննությանը հրավիրել նաև ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցչին՝ գործով պարզաբանումներ ստանալու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22 հոկտեմբերի 2013 թվականի
ՍԴԱՈ-85